Ռափայել Պատկանյան

Անվնաս մարդ

ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Նվեր Մն. Թիմուրյանին

Живя согласно со строгою моралью

Я никому не сделал в мире зла.

Некрасов

Հետևելով միշտ օրինաց աշխարհի,
Ես կյանքումըս մարդու վընաս չի արի.
Արժանացա մեծ-մեծ պատվո ու փառաց,
Որ միմիայն նըպատակն էր իմ կենաց.
Տունըս առատ ազգի ազգի ուտեստով,
Սընդուկներըս լի թանկագին ըզգեստով,
Ծառաներըս մունջ, միշտ հըլու հրամանիս,
Անպակաս էր ոսկի, արծաթ գըրպանիս:

Բայց ո՞վ տեսավ երկրիս վըրա անփուշ վարդ,
Այսպես հավերժ փառքով լըցյալ չի կա մարդ.
Այո՛, հասան ինձ էլ օրեր դառնագին,
Բայց ի զո՛ւր, զի հանցավոր չէր իմ հոգին.
Ես մընացի Տիրոջ կամքին հընազանդ,
Աղոթելով տիվ և գիշեր ջերմեռանդ:
Հետևելով միշտ օրինաց աշխարհի,

Ես կյանքումըս մարդու վընաս չի արի:

Մի օր ծառաս կոտրեց իմ մեծ հայելին,
Որ կարժենար քիչ-քիչ հազար ֆիորին.
Ես չասացի նորան խոսքեր անվայել,
Այլ ստիպեցի վեց ամ ձրրի ծառայել.
Այս դիպվածը նորան խըրատ կըլիներ .
Թե որ մինչև յոթներորդը նա ապրեր:
Հետևելով միշտ օրինաց աշխարհի,
Ես կյանքումըս մարդու վընաս չի արի:

Մի օր եկավ իմ մոտ մի խեղճ պատանի,
Խընդրեց, որ ես դընեմ նորան մի բանի.
Խիստ չափավոր էր թըշվառի խընդրածը,
Բայց էն տարի շատ թանկագին էր հացը.
Չընդունեցի. նա էլ գընաց ջուրն ընկավ.
Ափսո՛ս տըղա, որ նա էդպես շուտ մեռավ:
Հետևելով միշտ օրինաց աշխարհի,
Ես կյանքումըս մարդու վընաս չի արի:

Մի օր տեսա մի ալևոր մուրացկան,
Որ վեց տարի առաջ այգիումս էր վարձկան.
Խոշբեշ արի հետը, սիրով խոսեցի,
Սրանից սավայ՝ ո՞նց է քեֆըդ, հարցուցի.
Բայց նա հանկարծ ինձնից խընդրեց մեկ մանեթ.
Ես զարմացա սաստիկ ու շուտ դարձա ետ:
Հետևելով միշտ օրինաց աշխարհի,
Ես կյանքումըս մարդու վընաս չի արի:

Մի օր որդիս իրա կամքով, անհրաման,
Սընդուկիցըս հանեց հինգ թե վեց թուման.
Ես իմացա, վըրա հասա բըռնեցի,
Ձեռքը կապած՝ դատավորին մատնեցի.

Շատ չի անցավ վախից խեղճը թույն կերավ:
Ահա՛, էսպես միակ հույսը իմ կորավ:
Հետևելով միշտ օրինաց աշխարհի,
Ես կյանքումըս մարդու վընաս չի արի:

Իմ Շուշանի սիրտը կըպավ Օհանին.
Էդ Օհանի ծընողք չունքի խեղճ էին,
Ես Շուշանիս տվի հարուստ քոռ Գոգուն,
Որ համրանքով չըգիտեր չափն իր ոսկուն.
Բայց քամբախտ էր ծընած օրից խեղճ Շուշան,
Վեց ամսից մընտավ թաց, սառ գերեզման:
Հետևելով միշտ օրինաց աշխարհի,
Ես կյանքումըս մարդու վընաս չի արի: